ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱՄԱԿԸ
ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ

ՄՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Աշխարհներից մոտ և հեռու, երկրի բոլոր ափերից
Ժողովուրդներն աշխատավոր իրենց հայացքն ցնծալից
Այսօր սիրով Քեզ են ուղղում, Առաջնորդիդ մեծանուն,
Իրենց հորը, հարազատին և ուսուցչին իմաստուն:
Հայ ժողովուրդն երախտագետ զգացմունքներով այսօր
Իր սրտագին խոսքն է բերում բարեկամին իր հզոր:
Մեր ժողովուրդը հինավուրց իր հայրերի հողն արդար
Պաշտպանել է իր արյունով և հերկել է դարեդար,
Երազել է ազատություն, լույս, գիտություն, խաղաղ կյանք,
Երազել է ստեղծագործ և անկաշկանդ աշխատանք:
Սակայն դաժան ոսոխները աշխարհակալ ու վայրագ
Սրածել են ժողովրդին, կործանել շեն ու քաղաք:
Եվ կողոպտվեց, գերի վարվեց ժողովուրդն անպաշտպան,
Դառավ պանդուխտ, անհայրենիք աշխարհով մեկ ցիր ու ցան:
Եվ խաչակիր Եվրոպայից, Արևմուտքից Քրիստոնյա
Անկարելի ցավերի մեջ՝ լույս փրկություն հուսաց նա:
Բայց ոհրածին արքաները, նենգ, ընչաքաղց Եվրոպան
Մեր արյունը սակարկեցին մեր ոսոխի հետ դաժան:
Եվ մարդկային պատմությունը եղավ սակայն անարդար,
Հանդեպ մի հին ժողովրդի, ստեղծագործ, շինարար:
Ուր որ սակայն դեզերեց նա օտար երկրում վշտահեծ
Թե հայրենի չքնաղակերտ ավերների, փոշու մեջ
Անհունորեն երազեց նա ազատ, անկախ հայրենիք,
Նոր հոյակապ վերածնունդ, կյանք բեղմնավոր, երջանիկ:
Սակայն նորից որդեկորույս դառն հեծում էր նա դարեր
Իր աստղամերձ լեռների տակ, ոստաններում իր ավեր,

Երբ վերստին հին մոլուցքով բշնամին մեր բարբարոս,
Որին այնքան նախանձում են բարեհիները բոլոր,
Երբ վերստին զարհուրելի կատաղությամբ իր ահեղ
Ավերում էր, կոտորում էր աշխարհն հայոց հնագեղ.
Աշխարհն հայոց՝ ոգիացած ժողովրդի հանճարով,
Արվեստի վեհ կորողներով, դյուցազնական վեպերով:
Սրածում էր մարդազայլը. մանուկներին հոշոտում:
Սպանվում էր ժողովուրդը. արյան հունձն էր բորբոքվում:
Մահանում էր Հայաստանը. ոչ մի սրտից օգնություն:

Անհուսության խավարի մեջ վսեմ ձայնը Քո լսվեց.—
«Պետք է փրկել Հայաստանը»: Եվ փրկության ժամն հնչեց:
Հասավ բազուկը մեծազոր՝ հանհարաշատ Լենինի,
Ծփաց դրոշը բոլշևիկյան— կասեց հունձքը արյունի:
Հայ ժողովրդի դյուցազնական բարեկամը դարավոր—
Ռուս եղբայրը հասավ բուժեց մեր վերքերը արնաուծոր:
Հոկտեմբերի արևի տակ ծնվեց շքեղ, լուսափառ,
Ազատության, եղբայրության, մարդկայնության նոր աշխարհ:

Եվ առավ նա Հայաստանը իր փրկարար լույսի մեջ.
Որպես մանուկ արևածին հայ՝ ժողովուրդը կանգնեց.
Կանգնեց ազատ սովետական ընտանիքում մեծափառ
Իր պետական դրոշակով, իրավունքով հավասար:
Կանգնեց խրոխտ՝ սոցիալիզմի դրոշի տակ փառապանծ,
Որպես զինվոր քաջամարտիկ, որպես զինվոր անձնուրաց:
Փոշիացան ստրկության շղթաները շոնդալից.

Եվ մեզ համար բացվեց նոր էջ հրաշապատում, անբախիծ:
Քո օգնությամբ, Քո հանհարով, ով մեծազոր բարեկամ,
Մեր քարերը բողբոջեցին, մեր դաշտերը շունչ առան:
Քո օգնությամբ համատարած աշխատանքը բռնկվեց,
Գոտեպնդված գործի ելան ժողովուրդը՝ փոքր ու մեծ:
Խորտակեցինք ժայռ ապառաժ— ջրերն ելան պաղպաջուն
Երգով եկան, կենդանացրին դաշտ ու ապառ տոչորուն:
Մեր լեռների գագաթներում՝ ջրհեղեղից մնացած՝
Լհակները կրակ դառան, ուժ ու եռանդ, լույսի գանձ:
Համայնական մեր արտերում, այգիներում ոսկեվառ
Առատության ծովը փռվեց, բերք ու բարիք անսպառ:
Կառուցողի մուրճն է զնգում, բարձրանում են ամենուր
Կամարների պես հաղթական ապարանքներ նորանոր:
Անտառներից բափուր եղած մեր լեռները հրակեզ,
Մեր դաշտերը ամայացած՝ դառան պուրակ ու պարտեզ:
Եղնիկները, սոխակները փախած ոսոխի ձեռքից,
Վերադարձան մեր լեռները, մեր դաշտերը ծաղկալից:
Կռունկները մեր աշխարհից ուրախ լուրեր են տանում
Պանդուխտներին մեր հեռավոր՝ հայրենաբաղձ, տոչորուն,
Պանդուխտները հին կարոտով հայրենական տան ծուխին
Բռնել են արդ վերադարձի վաղուց երազած ուղին:

Գործարանները հոյակապ, մեքենաներ շառաչուն
Ընձեռնում են երկրին կորով, հառաջընթաց հարանուն:
Ահա ոստանը մեր շքեղ, վառ պուրակներ հոգեբով,
Կուլտուրայի վեհ տաճարներ գեղամանդակ սյուներով:
Արվեստների ու գիտության պերճ կաճառներ ներշնչող,
Թանգարաններ և թատրոններ և ակումբներ լուսաշող:
Խպրոցների ցանցը լուսե՝ գյուղ ու քաղաք տարածուն,
Ուր մանուկներն վազ են տալիս կենսաբրիո ու ցնծուն,
Ուսանողներն մաքառում են գրքին հակված՝ մշտարբուն,

Թափանցելու արվեստների և գիտության մեջ անհուն:
Մեր արվեստի վարպետները, զուսանները խանդավառ
Պանծացնում են Քո Մեծ գարը իմաստնագույն ու պայծառ:
Ամրացնելու, կուռ կռելու հիմքերը մեր զորության
Տիեզերքի խորքն են սուզվում գիտունները մեր հոգնաջան:
Հավերժական անդունդներից ուժ և ճաճանչ են ուսում
Եվ անմատույց աբեների, աստղերի քայլն են չափում:
Կյանքն է դարձել գործի, փառքի բռիչքների ասպարեզ,
Ամենուրեք ուրախության, երջանկության նոխ պարտեզ:

Մեր լուսազարդ հայրենիքի սահմաններին առընթեր
Ոսոխները մեր չարամիտ՝ դավ են նյութում օր-գիշեր,
Բայց մենք հանգիստ, սրտանվեր կառուցում ենք անվեհեր
Կոմունիզմը խոր հիմքերով, խարիսխներով աներեր:
Մենք վախ չունենք, մենք կերտում ենք, բարձրանում ենք անխափան,
Մեր բիկունքին, որպես ամրոց, քաջ պահապան ու պաշտպան,
Միությունն է կանգնած հզոր, Միությունն անպարտելի,
Եղբայրական Սովետների հզորությամբ անընկճելի:

Ո՜վ Ստալին, Քո փառապանծ յոբանասուն ամյակին
Բերում ենք մեր հրճվանքը, մաղթանքները սրտագին:
Ուր պայքար կա բռնության դեմ, հալածանքի, կեղեքման,
Դու այնտեղ ես Քո անունով, որպես դրոշ հաղթության:
Սովորեցրիր Դու չարատանջ մարդկությանը պայքարի
Հանուն ազատ, երջանկաբեր, իդեալական աշխարհի,
Ուր որ մարդն է մարդուն եղբայր, իրար նեցուկ և ընկեր,
Աշխատանքն է ուրախություն, սխրանք, բռիչք կենսաբեր:
Փա՜ռք Քեզ հավետ... Դու հանեցիր խոր դարերից մրամած
Բազմություններ ոտնահարված դեպի լույսը երազած:
Դու գինեցիր գեղջուկներին, ստրուկներին դարավոր
Իրավունքով, նոր գիտությամբ, տեխնիկայով մեծազոր:
Եվ տեր դարձան նրանք իրենց արդար ու սուրբ վաստակին,
Հայրենիքին, իշխանության և բնության տարերքին:
Նոր կուլտուրան ամենուրեք, բյուր բարիքներ շաղ տվեց,
Դյուղ ու քաղաք անջրպետող պատնեշը հին խորտակեց:
Պատմության երբը փոխեցիր, և օրենքդ անբերի
Սրբագործեց նոր կարգերը հեղաշրջված աշխարհի:
Աշխարհով մեկ մաղթում ենք Քեզ կյանք ու արև անհատնում:
Քո գործերին անմահություն, Քո ըղձերին կատարում:

Երբ բշնամին ֆաշիստական արյունատենչ ու մոլի
Խուժեց երկիրը մեր խաղաղ, ով զորավար պանծալի,
Դու մեզ տարար ռազմի դաշտը, հաղթանակի մեզ տարար,
Եվ փշրեցիր գոռ բշնամուն՝ ամբարտավան, դավադիր:
Քո հանճարով, հզոր կամքով ազատեցիր կորստից
Ժողովուրդներին և կուլտուրան՝ եկած անբիվ դարերից:

Դու փրկեցիր մանուկների կյանքը քաղցր, բանկագին,
Խաղաղություն տարգեեցիր նվիրական մեր երկրին:
Փա՜ռք Քեզ հավերժ, խաղաղության դու կուռ պատվար անսասան,
Դու սրբազան խաղաղության, Դու մարդկության բարեկամ:
Ո՜վ մեծագործ, Քո պանծալի յորանասուն ամյակին
Սովետական Հայաստանի գավակները խնդագին
Բոլոր հոգով, բոլոր սրտով մաղթում են քեզ երկար կյանք,
Առողջություն, ուժ և կորով, փառք հավիտյան անբառամ:
Մեզ պետություն պարգեեցիր և լուսավառ ապագա,
Մեր սրտերում Քո անունը հավերժ պիտի շողշողա:
Քո հանճարեղ անձի մեջ մենք, ով Առաջնորդ բանկագին,
Տեսնում ենք մեր ամենօրյա բարձրացնող բազուկին:
Քո ձեռքերով կռած-կոփած եղբայրական դաշինքում
Մեր հարազատ հայրենիքի անսպառ ուժն ենք տեսնում:
Զավակներդ, զինվոր արի կոմունիզմի բանակին,
Ուխտված են նրա հզոր աշխարհասփյուռ ընթացքին:

Փա՜ռք Քեզ հավետ, ով մեծագործ, մաղթում ենք մեր ջերմ սրտով,
Որ աշխարհում հաղթանակի խաղաղությունդ անվրդով:
Որ աշխարհում հաղթանակի երազը ողջ մարդկության
Եվ հուրհրա արեգակը երջանկության անսահման:
Թող միշտ հնչե եղբայրական վեհ համերգը հրաշագեղ,
Ուր ցնծում է և հայ երգը ազատ Մասիս լեռն ի վեր:
Բոլոր հոգով, բոլոր սրտով մաղթում ենք Քեզ երկար կյանք,
Առողջություն, ուժ և կորով, փառք հավիտյան անբառամ:

Հայ ժողովրդի նամակը չափածոյի վերածեց
Ստալինյան մրցանակի լաուրեատ, բանաստեղծ
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ